

Հավելված  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային  
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը  
կարգավորող պետական հանձնաժողովի  
2018 թվականի ապրիլի 5-ի N 11-Ա որոշման

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

### **ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2018

## ՀԱՍՈՒՑՆԵՐԻ ԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ Ի ԿԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը գործում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի, «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Փոստային կապի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին», «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների հիման վրա:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) էներգետիկայի (էլեկտրաէներգետիկա, ջերմամատակարարում, գազամատակարարում), հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), հեռուստատեսության և ռադիոյի, տնտեսական մրցակցության պաշտպանության, փոստային կապի (ուճիվերսալ ծառայությունների սակագների սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային ոլորտում (խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարում, ջրահեռացում և կեղտաջրերի մաքրում) կարգավորում է իրականացնում իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

2017 թվականի ընթացքում տեղի է ունեցել Հանձնաժողովի 14 նիստ: Ընդունվել է 66 որոշում՝ 11 նորմատիվ և 55 անհատական:

Հանձնաժողովի անդամների, ստորաբաժանումների պատասխանատուների մասնակցությամբ մշակվել, ընթացքավորվել է 1682 գրություն, որից 1335 մտից և 347 ելից:

Ստորագրվել է կադրային, գործառնական ու կազմակերպչական բնույթի 355 հրաման, որից 106-ը՝ նախագահի, և 249-ը՝ աշխատակազմի ղեկավարի:

Հանձնաժողովի աշխատակիցները, ծառայողական պարտականությունների կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված, համագործակցության և աշխատանքային ծրագրերի շրջանակներում 42 անգամ գործուղվել են Արցախի Հանրապետության շրջաններ, Հայաստանի Հանրապետության համապատասխան հանձնաժողովներ և արտերկիր (Տաջիկստան, Մոլդովա, Շոտլանդիա, Հունգարիա, Բելառուս և Ավստրիա):

«Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի համապատասխան կատարվել են՝

- քաղաքացիական ծառայողների անձնական գործերի վարում և ստուգում, աշխատանքային ստաժի հաշվարկ, քաղաքացիական ծառայողների հիմնական աշխատավարձերի բնականոն աճի վերահսկողություն, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի հաստատում և մուտքագրում ծրագրում,

- աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացների մասնակցության ապահովում, ատեստավորման գործընթացի և թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթների կազմակերպում,

- 2018 թվականին ատեստավորման ենթակա քաղաքացիական ծառայողների հայտի կազմում:

Հանձնաժողովի պաշտոնական վեբ-կայքում ([www.kargavorum.nkr.am](http://www.kargavorum.nkr.am)) տեղադրվել է 74 հայտարարություն և 63 նորություն, 205 հարց ու պատասխան, 248 ակտուալ թեմա, 248 հետաքրքիր նյութ, 32 հոդված, 10 նոր տեսանյութ, 4 ֆոտոալբոմ:

Հաշվետու ժամանակահատվածում վեբ-կայքի այցելուների թիվը կազմել է 4178՝ նախորդ տարվա 8421-ի փոխարեն, այցելությունների ընդհանուր թիվը՝ 9576՝ նախորդ տարվա 2990-ի փոխարեն: Այցելություններից 9173-ը Արցախի և Հայաստանի Հանրապետություններից են, 77-ը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներից, 42-ը՝

Ռուսաստանի Դաշնությունից, 38-ը՝ Ադրբեջանի Հանրապետությունից, 186-ը՝ այլ երկրներից:

Հանձնաժողովի գործունեությունը լուսաբանվել է Արցախի հանրային հեռուստատեսությամբ, «Ազատ Արցախ» հանրապետական թերթով, «Ստեփանակերտ» շաբաթաթերթով, «Արցախպրես» լրատվական գործակալության կողմից:

Հայաստանի Հանրապետության գործընկեր հանձնաժողովների հետ համատեղ միստերը լուսաբանվել են «հ1», «հ2», «Շանթ», «Արմենիա», «Կենտրոն» հեռուստաալիքներով, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթով:

Ապահովվել է 9 զանգվածային լրատվության միջոցների և 4 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների պարբերաբար մասնակցությունը Հանձնաժողովի միստերին:

Թեժ գծի միջոցով ընդունվել է 1 ահազանգ, Հանձնաժողովի ֆեյսբուքյան էջի միջոցով՝ 2 դիմում-բողոք, որոնք ընթացքավորվել են օրենսդրությամբ սահմանված կարգով:

Իրականացվել են կարգավորվող ընկերությունների կողմից քաղաքացիների դիմում-բողոքների ուսումնասիրման ընթացակարգերի, գրանցամատյանների ստուգումներ, թերությունների վերհանում, արդյունքների գնահատում և համապատասխան ցուցումների տրամադրում:

## **ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

**Էներգետիկայի բնագավառում** իրականացվել են էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունների վերլուծություն, լիցենզավորված գործունեության իրականացման պայմանների վերահսկում, սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունների ամփոփում և բազայի համալրում:

Հաշվետու ժամանակաընթացքում տրամադրվել է 10 լիցենզիա՝

-«Կարհաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Քաշաթաղի մասնաճյուղին՝ «Աղավնո-Կ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման համար,

-«Մ. Էներգո Լ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ «Միություն» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման համար,

-«Վիսավտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ «Ջերմա-ջուր» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության համար,

-«Վիկինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ «Սյունիք» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության համար,

-«Կարհաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Քաշաթաղի մասնաճյուղին՝ «Աղավնո-Կ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության համար,

-«Թարթառ Էներջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ «ԼԼ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության համար,

-«Տուն-ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ «Տուն» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության համար,

-«Սահման» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ «Սահման» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության համար,

-«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությանը՝ «ԼԼ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության համար,

-«Ջի Էներջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ «Թարթառ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության համար:

Ներկայումս Արցախի Հանրապետությունում գործում են «Սարսանգ» ՀԷԿ-ը և 17 փոքր ՀԷԿ-եր, կառուցման փուլում է գտնվում 10 փոքր ՀԷԿ:

Քննարկվել և մշակվել են էլեկտրական էներգիայի և բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները, ինչպես նաև «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» որոշման նախագիծը:

Կազմակերպվել են քննարկումներ լիցենզավորված անձանց միջև առաջացած տարաձայնությունների, սպառողների հարցադրումների և բողոքների վերաբերյալ:

Մշակվել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ համագործակցության 2018 թվականի ծրագիրը:

Կազմվել է էներգետիկայի բնագավառում 2018-2020 թվականներին կանխատեսվող միջոցառումների ծրագիր:

**Ջրային համակարգում** իրականացվել են կարգավորվող անձանց կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական տեղեկատվությունների վերլուծություններ, կարգավորվող անձանց թույլտվության պայմանների կատարման հսկողություն:

Հաստատվել են «Բարեկարգում» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող ծառայությունների որակի ցուցանիշների գրանցամատյանների և Հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության օրինակելի ձևերը:

Երկարածգվել է «Ջրամատակարարում և ջրահեռացում» ընկերության թույլտվության գործողության ժամկետը:

Ջրային համակարգի ոլորտում գործում է 4 ընկերություն:

Կազմակերպվել են քննարկումներ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքում և «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

**Տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառում** կատարվել է «Տեխնոսերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացրած ֆինանսական հաշվետվությունների համեմատական վերլուծություն:

**Հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), հեռուստատեսության և ռադիոյի ու փոստային կապի բնագավառ.**

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում 2017 թվականի ընթացքում տրամադրվել է ռադիոհաճախականության օգտագործման 3 թույլտվություն՝ ռադիոկապի շարժական ցանցի կազմակերպման համար ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման 1 թույլտվություն, անլար հասանելիության լայնաշերտ ցանցի կազմակերպման համար ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման 1 թույլտվություն և ռադիոռելեային կապի գծերի կազմակերպման համար ռադիոհաճախականությունների օգտագործման 1 թույլտվություն, ինչպես նաև սիրողական ռադիոսպերատորներին հատկացված ռադիոհաճախականությունների տիրույթների օգտագործման 4 թույլտվություն, դադարեցվել է ռադիոհաճախականության օգտագործման 1 թույլտվության գործողությունը:

Ներկայումս էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում գործունեություն են ծավալում լիցենզավորված մեկ ընկերություն և ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն ստացած 11 ընկերություն:

2017 թվականի փետրվարի 1-ից միջինը 13,5 տոկոսով նվազել են էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի մի շարք ծառայությունների սակագները: 1,99-4,99 դրամով (9,95-44,4 %-ով) նվազել են էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի

թվային ֆիքսված, ֆիքսված անլար միջերես և շարժական կապով ներցանցային և դեպի Հայաստանի Հանրապետության ֆիքսված և շարժական ցանց իրականացվող զանգերի թույլատրված արժեքները, 200 դրամով (16,6 %-ով) շարժական կապի հետվճարային հեռախոսակապի ամսավճարը:

Ներկայացվել է առաջարկություն «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով:

Ոլորտի իրավասու մարմնի և Հայաստանի Հանրապետության համապատասխան կառույցների հետ համագործակցության արդյունքում ընդլայնվել են Արցախի Հանրապետության տարածքում սիրողական ռադիոյին հատկացված ռադիոհաճախականությունների շերտերը:

**Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում** հայտարարվել է ռադիոհաղորդումների հեռարձակման (վերահեռարձակման) 1 մրցույթ, տրամադրվել է ընդհանուր ուղղվածության հեռուստաօրագրերի կաբելային (լարային) հեռարձակման (վերահեռարձակման) 1 լիցենզիա: 2017 թվականի ընթացքում ռադիոհաղորդումների հեռարձակման (վերահեռարձակման) լիցենզիա չի տրամադրվել:

Ներկայումս հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում ռադիոհաղորդումների հեռարձակման (վերահեռարձակման) գործունեությամբ զբաղվում է 11, իսկ հեռուստաօրագրերի հեռարձակմամբ (վերահեռարձակմամբ)՝ 4 ընկերություն, որից 2-ը՝ եթերային և 2-ը՝ կաբելային: Արցախի Հանրապետությունում գործում է 1 հանրային հեռուստառադիոընկերություն:

Ուսումնասիրվել և վերլուծվել են ռադիոընկերությունների կողմից ներկայացվող ռադիոհաղորդումների գրանցամատյանների ամենամսյա տվյալները: Իրականացվել է լիցենզավորված ռադիոընկերությունների եթերների ընտրանքային մշտադիտարկում:

Կատարվել են ռադիոհաճախականություն օգտագործող տնտեսավարողների կողմից 2017 թվականին Արցախի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների տարեկան և եռամսյակային գումարների հաշվարկները:

Իրականացվել են ռադիոընկերությունների ուղիղ եթերների ընտրանքային մշտադիտարկումներ, որոնց քանակը հաշվետու տարում կազմել է 2 613 ժամ:

Մշակվել են ոլորտում 2018-2020 թվականներին նախանշվող միջոցառումների ծրագիրը, Հայաստանի Հանրապետության կարգավորող հանձնաժողովների հետ համատեղ աշխատանքային ծրագրերը:

Արցախի Հանրապետության 2017 թվականի փետրվարի 20-ի սահմանադրական հանրաքվեով պայմանավորված քարոզչության ժամանակահատվածում (19.01.2017-20.02.2017թթ.) իրականացվել է վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից քարոզչության լուսաբանման գործընթացի մշտադիտարկում, կազմվել են համապատասխան եզրակացությունները:

Էլեկտրոնային հաղորդակցության, հեռուստատեսության և ռադիոյի ու **փոստային կապի** բնագավառներում հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տարեկան և կիսամյակային ֆինանսական հաշվետվությունների, հանրային շարժական բջջային կապի, տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող անձանց կողմից ներկայացվող եռամսյակային և հեռախոսաֆիկացման վերաբերյալ ներկայացվող կիսամյակային հաշվետվությունների վերլուծություններ:

**Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում** 2017 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք աշխատանքներ առաջին անհրաժեշտության ապրանքների մանրածախ գների մոնիթորինգների, անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման, գերիշխող դիրքի ճանաչման, ապրանքային շուկաների կառուցվածքի և համակենտրոնացման դեպքերի ուսումնասիրության, ինչպես նաև մենաշնորհ և գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված տեղեկատվությունների վերլուծության ուղղությամբ:

### **Մանրածախ գների մոնիթորինգ.**

Հաշվետու ժամանակաշրջանում Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում իրականացվել է պարենային և ոչ պարենային 37 ապրանքային շուկաների 71 ապրանքատեսակների մանրածախ գների 53 մոնիթորինգ 30 առևտրային օբյեկտում, կատարվել դրանց արդյունքների վերլուծություն:

Ընդհանուր առմամբ ուսումնասիրված 71 ապրանքատեսակների մասով արձանագրվել է 6,1% գնաճ:

Ուսումնասիրություններ են իրականացվել ծաղիկների և հացամթերքի շրջանառության ոլորտներում:

### **Անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտում.**

Ստեփանակերտ քաղաքում իրականացվել է անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման նպատակով 53 դիտանցում: Դիտանցումների ընթացքում ուսումնասիրվել են մանրածախ առևտրի ոլորտում իրացվող ապրանքների վրա մատնանշվող տեղեկությունների արժանահավատությունը, օրենսդրության պահանջներին համապատասխանությունը, ինչպես նաև հնարավոր մոլորեցման խնդիրները: Մասնավորապես, ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է հացի զտաքաշի վերաբերյալ ոչ հավաստի տեղեկությունների մատնանշում, ինչը համարվում է հասարակության մոլորեցում, և ձեռնարկվել են համապատասխան միջոցներ:

Նշված ժամանակահատվածում ուշադրության կենտրոնում է պահվել հագուստի և կոշիկի իրացման օբյեկտներում սեզոնային բնույթ կրող գեղջերի արտապատկերումը կամ այլ միջոցներով դրանց գովազդումը: Որոշ դեպքերում տնտեսավարող սուբյեկտների կողմից արտապատկերված կամ գովազդված գեղջերը չէին տարածվում ամբողջ տեսականու վրա, սակայն դրանց մասին համապատասխան նշումներ առկա չէին: Արձանագրված փաստերի հիման վրա 2 տնտեսավարող սուբյեկտի գործողությունները որակվել են որպես հասարակության մոլորեցում, և ձեռնարկվել են համապատասխան միջոցներ:

Դիտանցումների արդյունքում բացահայտվել է գործարանային պայմաններում արտադրված և որպես «տնական» բնութագրվող ապրանքատեսակ: Համագործակցության շրջանակում վերոնշյալի մասին տեղեկացվել է Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին, քանի որ նշված ապրանքատեսակի արտադրությունը և ներկրումը Արցախի Հանրապետություն իրականացվել է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունից:

### **Ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություն.**

Նշված ժամանակահատվածում ուսումնասիրվել է «Հաց», «Ցորենի ալյուր», «Հավի միս», «Հավի ձու», «Նրբերշիկ», «Բենզին» և «Դիզվառելիք» ապրանքային շուկաների կառուցվածքը:

- Ուսումնասիրվող ժամանակահատվածում «Հաց», «Ցորենի ալյուր», «Նրբերշիկ», «Բենզին» և «Դիզվառելիք» ապրանքային շուկաներում տեղի են ունեցել դրական փոփոխություններ՝ կապված առաջատար դիրքեր ունեցող տնտեսավարող սուբյեկտների իրացման մասնաբաժինների նվազման՝ կենտրոնացվածության թուլացման հետ.

- Իրականացված վերլուծությունները ցույց են տվել, որ «Հաց» և «Ցորենի ալյուր» ապրանքային շուկաներում այլևս չկան գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներ, իսկ «Նրբերշիկ» ապրանքային շուկայում նախկինում գերիշխող դիրք ունեցող 3 ընկերություններից 2-ը կորցրել են իրենց գերիշխող դիրքը:

- «Հաց», «Հավի միս», «Հավի ձու» և «Նրբերշիկ» ապրանքային շուկաների իրացման ծավալները և շուկաներում գործող տնտեսավարող սուբյեկտները ավելացել են, իսկ «Ցորենի ալյուր», «Բենզին» և «Դիզվառելիք» ապրանքային շուկաներինը՝ նվազել կամ մնացել անփոփոխ:

- Մրցակցային միջավայրի բարելավման տեսանկյունից դրական միտում ունի նաև «Հավի ձու» և «Նրբերշիկ» ապրանքային շուկաներում արտադրություն

իրականացնող նոր տնտեսավարող սուբյեկտների հայտնվելը, որոնց իրացման մասնաբաժինները դեռևս փոքր են:

- «Ցորենի ալյուր», «Հավի միս» և «Հավի ձու» ապրանքային շուկաների իրացման ծավալներում ուսումնասիրվող ժամանակահատվածներում ավելացել են տեղական արտադրության ապրանքատեսակների չափաբաժինները:

Ապրանքային շուկաների պարբերաբար ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս պարզելու շուկաներում տեղի ունեցող փոփոխությունների դինամիկան և նախանշելու շուկաներում մրցակցության զարգացման համապատասխան միջոցառումները:

### **Մենաշնորհ և գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված տեղեկատվության վերլուծություն.**

Ներկայումս Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում են գտնվում 55 ապրանքային շուկաներում գործող 5 մենաշնորհ և 25 գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներ:

Հիմք ընդունելով գերիշխող և մենաշնորհ դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների 2016 թվականի 2-րդ կիսամյակի վերաբերյալ ներկայացրած տեղեկատվությունների ուսումնասիրության արդյունքները՝ որոշվել է հետագա ուսումնասիրությունների ընթացքում առավել մեծ ուշադրություն հատկացնել էական փոփոխություն արձանագրած ապրանքային շուկաներում գործող տնտեսավարող սուբյեկտների իրացման ծավալների դինամիկայի վրա՝ գերիշխող դիրքի ամրապնդումը, դրա վերացումը կամ նոր գերիշխող դիրքի առկայությունը բացահայտելու նպատակով:

Ընդհանուր առմամբ 2017 թվականի ընթացքում իրականացված մենաշնորհ և գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների վարքագծի, իրացման ծավալների և գնային քաղաքականության 117 ուսումնասիրության արդյունքում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման, մասնավորապես գերիշխող դիրքի չարաչափաներ երևույթներ չեն հայտնաբերվել:

### **Արցախի Հանրապետության շրջաններում կատարված աշխատանքներ.**

Մրցակցային միջավայրի զարգացումը խրախուսելու նպատակով դիտանցումներ են իրականացվել նաև Արցախի Հանրապետության Մարտունի, Մարտակերտ, Հադրուբ, Բերձոր, Ասկերան և Շուշի քաղաքներում, ինչպես նաև մի շարք գյուղերում գործող առևտրային օբյեկտներում:

Համեմատվել են Ստեփանակերտում և շրջկենտրոններում առկա առաջին անհրաժեշտության միևնույն ապրանքատեսակների մանրածախ գները. շրջկենտրոններում արձանագրվել է մինչև 7 % հավելագին՝ պայմանավորված տեղափոխման ծախսերով և համեմատաբար ցածր իրացվելիությամբ:

Հանձնաժողովի կողմից հաշվետու ժամանակահատվածում լիցենզավորվել է 19, հաշվառման վերցվել 8 նոր սուբյեկտ: 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառման վերցված ընկերությունների ընդհանուր թիվը կազմել է 58:

Հանձնաժողովի նախագահի կարգադրության համաձայն՝ ստուգումների և մոնիթորինգների իրականացման համար պատրաստվել է 214 հրաման (հանձնարարագիր), որից 155 հրաման՝ մի շարք տնտեսավարող սուբյեկտների մոտ դիտանցումներ իրականացնելու, 53 հրաման՝ անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման, 6 հրաման՝ Հադրուբ, Մարտունի, Ասկերան, Շուշի, Մարտակերտ, Բերձոր քաղաքներում դիտանցումներ իրականացնելու վերաբերյալ:

## **ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

2017 թվականին շարունակվել է սերտ համագործակցությունը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական ու հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովների հետ: Իրականացվել են զգալի աշխատանքներ

համագործակցության հուշագրերով և համատեղ աշխատանքային ծրագրերով նախանշված ուղղություններով՝ միտված հանձնաժողովների միջև տեղեկատվության փոխանակմանը, փոխադարձ այցելությունների միջոցով միջազգային փորձի ուսումնասիրություններին, օրենսդրական դաշտի ներդաշնակեցմանը: Հանձնաժողովը հնարավորություն է ընձեռել ԱրՊՀ ուսանողներին մասնակցելու կարգավորող հանձնաժողովների համագործակցության շրջանակում իրականացվող աշխատանքներին:

Համագործակցության շրջանակներում Հանձնաժողովի 33 աշխատակից գործուղվել է Հայաստանի Հանրապետության կարգավորող հանձնաժողովներ: Նրանցից 6-ը մասնակցել են արտասահմանում կազմակերպված աշխատաժողովների և սեմինարների, մասնավորապես՝

- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Հունգարիայի մրցակցության մարմնի (ՏՀԶԿՀՄՄ) կողմից Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում կազմակերպված «Շուկայի սահմանումը» և «Մրցակցային կանոնները և դեղորայքի ոլորտը» թեմաներով սեմինարներին:

- Մոլդովայի մայրաքաղաք Քիշնևում «Լայնաշերտ կապի զարգացումը» թեմայով միջազգային սեմինարին, որը կազմակերպվել է Եվրոպական հանձնաժողովի, Արևելյան գործընկերության էլեկտրոնային հաղորդակցության կարգավորողների խմբի (EaPeReg) և Մոլդովայի էլեկտրոնային հաղորդակցության ու տեղեկատվական տեխնոլոգիաների ազգային կարգավորող մարմնի կողմից:

- Շոտլանդիայի մայրաքաղաք Էդինբուրգում՝ Կարգավորող մարմինների Եվրոպական Պլատֆորմի (EPRA) 45-րդ գարնանային նստաշրջանին:

- Տաջիկստանի մայրաքաղաք Դուշանբեում Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային նստաշրջանին, որը կազմակերպվել է «Օքսֆամ» ընկերության՝ հասարակական հաշվետվության Գլոբալ Բանկի Ջրային համագործակցության ծրագրերի հետ համատեղ:

- Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում Կարգավորող մարմինների Եվրոպական Պլատֆորմի (EPRA) 46-րդ աշնանային նստաշրջանի՝ «Նորությունները թվայնացման դարաշրջանում և Կարգավորող Մարմինների դերը» թեմայով սեմինարին:

- Բելառուսի մայրաքաղաք Մինսկում Եվրոպական Միության Արևելյան գործընկերության հեռահաղորդակցության կարգավորող մարմինների՝ «Ցանցային չեզոքություն» թեմայով աշխատանքային սեմինարին:

- «Մրցակցության քաղաքականության կիրարկումը ֆինանսական ոլորտում» թեմայով ԵՄ աջակցության գործիք Թայեքս աշխատաժողովին:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի 2017 թվականի մայիսի 8-ի հրամանագրով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը մատուցած ծառայությունների համար և ի նշանավորումն Հաղթանակի տոնի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի կազմավորման և Շուշիի ազատագրման 25-րդ տարեդարձերի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական պարգևներով՝ մեդալներով են պարգևատրվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Ռոբերտ Նազարյանը, Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահ Գագիկ Բունիաթյանը և Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի 2017 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները



և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի միջև համագործակցության շրջանակում Արցախում ռադիոսպորտի ֆեդերացիայի ստեղծման ու աջակցման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի հուշամեդալով է պարգևատրվել «Հայաստանի Հանրապետության ռադիոսպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահ Արման Արայի Բաբլոյանը:

Հայաստանի Հանրապետության գործընկեր հանձնաժողովների համագործակցության կայացման, աջակցման ու դրա շրջանակներում իրականացված միջոցառումների ակտիվ մասնակցության համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի հուշամեդալներով են պարգևատրվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող պետական հանձնաժողովի 3, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2, հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 3 և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2 աշխատակիցներ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի պատվոգրերով են պարգևատրվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող պետական հանձնաժողովի 3, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 4, հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 3 և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 10 աշխատակիցներ:

2017 թվականի դեկտեմբերին Երևանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության գործընկեր հանձնաժողովների միջև համագործակցության շրջանակներում ամփոփվել են կատարված աշխատանքները, նախանշվել հետագա համագործակցության հեռանկարներն ու ծրագրերը և մի խումբ աշխատակիցներ պարգևատրվել են պատվոգրերով ու շնորհակալագրերով:

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից պարգևատրվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 4 աշխատակից՝ պատվոգրերով, 6-ը՝ շնորհակալագրերով:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից պարգևատրվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 1 աշխատակից՝ պատվոգրով, 8-ը՝ շնորհակալագրերով: Շնորհակալագրերով են պարգևատրվել նաև Արցախի հանրային հեռուստատեսության 2 աշխատակից՝ պետական կարգավորմանը վերաբերող հարցերը լավագույնս լուսաբանելու համար:

Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից պարգևատրվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 1 աշխատակից՝ պատվոգրով, 5-ը՝ շնորհակալագրերով: Շնորհակալագրերով են պարգևատրվել նաև Արցախի Հանրապետության արհեստակցական միությունների ֆեդերացիան, «Ազատ Արցախ» հանրապետական թերթը և Արցախի Հանրապետության հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը՝ արդյունավետ համագործակցության և Հայաստանի Հանրապետության

հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի աշխատանքներին ցուցաբերած օժանդակության համար:

2017 թվականին տեղի է ունեցել 6 համատեղ նիստ՝ հանձնաժողովների նախագահների գլխավորությամբ, որից 3-ը՝ Արցախի, 3-ը՝ Հայաստանի Հանրապետությունում:

Համագործակցության համաձայնագրերով և համատեղ աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումները մեծ մասամբ իրականացվել են:

Արդյունավետ համագործակցություն է ծավալվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, արդարադատության, Էկոնոմիկայի, ֆինանսների նախարարությունների, ինչպես նաև շահագրգիռ այլ պետական մարմինների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արհեստակցական միությունների ֆեդերացիայի և այլ հասարակական կազմակերպությունների հետ:

### **ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

Հաշվետու ժամանակահատվածում կարգավորման պարտադիր վճար վճարող 19 սուբյեկտների համար հաշվարկվել են կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույթաչափերը և ուղարկվել կարգավորվող գործուներություն իրականացնող անձանց ու վերահսկող մարմին:

2017 թվականի ընթացքում նախատեսված 840 815,8 հազար ՀՀ դրամի փոխարեն կարգավորվող անձանց կողմից պետական բյուջե է մուտքագրվել 852 618,7 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ՝ 1 486 17,0 հազար ՀՀ դրամ, որից՝ 133,5 հազար ՀՀ դրամ տույժ, պետական տուրք՝ 25 178,2 հազար ՀՀ դրամ, որից՝ 1 312,2 հազար ՀՀ դրամ տույժ, ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարներ՝ 678 823,5 հազար ՀՀ դրամ, որից՝ 52,5 հազար ՀՀ դրամ տույժ:

Հանձնաժողովի և նրա աշխատակազմի պահպանման և գործուներության համար անհրաժեշտ ծախսերը կատարվել են 95,8 տոկոսով:

Հանձնաժողովը օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացրել է ամսական, եռամսյակային հաշվետվություններ և ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների վերաբերյալ համապատասխան հաշվարկներ:

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ռ. ԹՈՐՈՍՅԱՆ**